

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ԿԱՊԿԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՉԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ամիր Մոհամմադ Շահսավարանի
ասպիրանտ

Սոցիալական հարաբերությունը կամ սոցիալական փոխգործակցությունը վերաբերում է երկու կամ ավելի անհատների միջև կապերին: Անհատի գործունեությունից բխող սոցիալական հարաբերությունները ձևավորում են սոցիալական կառուցվածքի հիմքը: Սոցիալական հարաբերությունների վերաբերյալ հիմնարար հարցադրումները պետք է որոնել դասական սոցիոլոգների աշխատություններում, այդ թվում Սաքս Վեբերի սոցիալական գործողության տեսության մեջ (Fadul & Estoque, 2010): Սոցիալական գործողությունը վերաբերում է այն գործողությանը, որը հաշվի է առնում անհատների (կամ կատարողների) գործողություններն ու հակագործողությունները: Ըստ Մաքս Վեբերի՝ գործողությունը «սոցիալական» է, եթե այն իրականացնող անհատը հաշվի է առնում ուրիշների վարքագիծը և այդ իսկ պատճառով այն իր ընթացքի մեջ ունի ուղղվածություն (Weber, 1978):

Սոցիալական հարաբերությունների մասին ամենաառաջին տեսակետը կարելի է գտնել «հավաքական գիտակցություն» հասկացության մեջ, որն առաջին անգամ օգտագործվել է Ղյուրկիեյմի (1997) կողմից՝ հղում անելով այն համընդհանուր համոզմունքները, որոնք հասարակության մեջ գործում են որպես միավորող ուժ: Իր «Աշխատանքի բաժանում» աշխատության մեջ, Ղյուրկիեյմը պնդում է, որ ավանդական /նախնադարյան հասարակություններում (տոհմային, ընտանեկան կամ ցեղային հարաբերությունների վրա հիմնաված հասարակություններում) տոտեմական կրոնը կարևոր դեր է խաղացել դրանց անդամներին միավորելու գործում՝ համընդհանուր գիտակցություն ձևավորելու միջոցով: Այս տիպի հասարակություններում, բոլոր անդամները մեծապես կիսում են անհատի գիտակցության տարրերը՝ փոխադարձ նմանության միջոցով ստեղծելով մեխանիկական համերաշխություն: Համոզմունքների և տրամադրությունների ամբողջությունը, որն ընդհանուր է հասարակության միջին անդամների համար, ստեղծում է իրեն հատուկ կյանքով որոշակի համակարգ: Այն կարող է անվանվել հավաքական կամ ստեղծարար գիտակցություն (Kenneth & Kenneth, 2005):

Իր, ինքնասպանություն գրքում Դյուրկհեյմը զարգացրեց սոցիալական կազմալուծում հասկացությունը՝ անդրադառնալով ինքնասպանության սոցիալական, այլ ոչ թե անհատական դրդապատճառներին: Սա կապված է հավաքական գիտակցության հասկացության հետ, քանի որ, եթե հասարակության մեջ առկա է ինտեգրման և համերաշխության պակաս, ապա ինքնասպանության տոկոսը ավելի բարձր է լինելու (Pickering & Walford, 2000):

Հարաբերության և փոխգործակցության տեսակները հասարակագիտության և մարդաբանության մեջ կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. առաջին և ամենահիմնական տեսակները կենդանանման վարքագծերն են, օրինակ՝ մարմնի տարբեր ֆիզիկական շարժումները: Այնուհետև նշվում գործողությունները՝ իմաստ և նպատակ ունեցող շարժումները: Սրանց հաջորդում են այլ մարդկանց (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) առնչվող սոցիալական վարքագծերը կամ սոցիալական գործողությունները, որոնք մյուս անհատից պահանջում են պատասխան գործողություն: Հաջորդը սոցիալական շփումներն են, սոցիալական գործողությունների շարք, որը ձևավորում է սոցիալական փոխգործակցությունների սկիզբը: Սոցիալական փոխգործակցություններն իրենց հերթին ձևավորում են սոցիալական հարաբերությունների հիմքը: Խորհրդանշանները սահմանում են սոցիալական հարաբերությունները: Առանց խորհրդանշանների մեր հասարակական կյանքը ոչ ավելի բարդ է լինելու քան կենդանիներինը (Sztompka, 2010):

Միջանձնային հարաբերությունները վկայակոչվում են որպես երկու կամ ավելի մարդկանց միջև անցողիկից միջև երկարատև կապերը: Այսպիսի կապը կարող է հիմնված լինել դատողության, սիրո, համերաշխության, կանոնավոր գործարար շփումների կամ որևէ այլ սոցիալական պարտավորության վրա (DeVreis & Goncu, 1987): Միջանձնային հարաբերությունները ձևավորվում են այնպիսի համատեքստերում, ինչպիսիք են՝ ընտանեկան, սոցիալական, մշակութային, տարածաշրջանային և այլն: Այն համատեքստերը, որոնցում ձևավորվում են միջանձնային հարաբերությունները կարող են տարբեր լինել՝ ներառելով ընտանեկան կամ ազգակցական կապերը, ընկերությունը, ամուսնությունը, գործընկերների հետ հարաբերությունները, աշխատանքը, ակումբները, թաղամասերը և պաշտամունքի վայրերը: Այս հարաբերությունները սովորաբար ազդեցություն են կրում և (կամ)

կարգավորվում են օրենքով, սովորություններով կամ փոխհամաձայնության միջոցով, և սոցիալական խմբերի ու հասարակության՝ որպես ամբողջության հիմքն են հանդիսանում (e.g., Nicolo, et al., 2011; Hayward, Berry & Ashton, 2011):

Հարաբերությունը սովորաբար դիտվում է որպես երկու անհատի միջև կապ, ինչպես օրինակ՝ ռոմանտիկ կամ ինտիմ հարաբերությունը, կամ ծնող-երեխա կապը: Անհատները կարող են նաև հարաբերություններ ունենալ մարդկանց խմբերի հետ, օրինակ՝ քահանայի և նրա համայնքի, ընտանիքի և քեռու/հորեղբոր կամ քաղաքապետի և քաղաքի բնակչության միջև կապը: Եվ ի վերջո մարդկանց խմբերը և նույնիսկ ազգերը կարող են միմյանց հետ հարաբերություններ ունենալ, չնայած որ սա շատ ավելի լայն տիրույթ է, քան այն, ինչ ընդգրկված է միջամենային հարաբերությունների թեմայի մեջ: (խմբերի միջև ասոցիացիաների վերաբերյալ ավելի շատ տեղեկություն ստանալու համար տես միջազգային հարաբերությունների մասին հոդվածներ): Հարաբերությունների վերաբերյալ գիտական աշխատությունների մեծամասնությունը կենտրոնացնում են միջամենային հարաբերությունների փոքր ենթաբազմության վրա, որը ներառում է զույգի սիրահար զուգընկերներին (e.g., Rosenfeld, 2005):

Բոլոր մշակույթներում սոցիալական հարաբերությունները կարող են դասակարգվել ըստ ազգակցական կապերի մակարդակների և սոցիալական փոխգործակցության տեսակների: Բոլոր մշակույթները ապահովում են լեզվական հասկացություններ և հոգեբանական ակնարկներ, որոնք օգնում են տարբերակել գենետիկայի և ներ-ամուսնական կապի, այդ թվում ընկերության (e.g., Ackerman, Kenrick, & Schaller, 2007), մակարդակները (Diewald, et al., 2009; Widmer, 2006): Ավելի ընդհանուր ասած՝ անհատների սոցիալական աշխարհները ներառում են ընտանիքում և դրանից դուրս գոյություն ունեցող միջամենային շփումների տեսակների լայն բազմազանություն (Lang, Wagner, & Neyer, 2009):

Միջամենային հարաբերությունները սովորաբար ներառում են փոխկախվածության որոշակի մակարդակ: Հարաբերության մեջ գտնվող մարդիկ հակված են միմյանց վրա ազդել, կիսել իրենց մտքերն ու զբաղմունքները և ներգրավվել միջոցառումներին միասին: Այս փոխկախվածության պատճառով շատ հանգամանքներ, որոնք փոխում են հարաբերության մեկ անդամին կամ ազդում նրա վրա,

մյուս անդամի վրա ևս ունենում են որոշակի ազդեցություն (Berscheid & Peplau, 1983):

Սիջանձնային հարաբերությունները դիմանիկ համակարգեր են, որոնք իրենց գոյության ընթացքում աընդհատ փոփոխվում են: Ինչպես կենդանի օրգանիզմները, հարաբերություններն ունեն սկիզբ, կյանքի տևողություն և վերջ: Երբ մարդիկ միմյանց ավելի լավ են ճանաչում և էմոցիոնալ տեսանկյունից ավելի են մտերմանում, հարաբերություններն աստճանաբար աճում ու զարգանում են, կամ դրանք աստիճանաբար վատթարանում են, երբ մարդիկ բաժանվում են միմյանցից, իրենց կյանքն են շարունակում և ուրիշների հետ նոր հարաբերություններ ձևավորում (Lang, Wagner, & Neyer, 2009):

Այս հոդվածում, մենք նպատակ ունենք քննարկելու սոցիալական և միջանձնային հարաբերությունները՝ երկու ակնհայտորեն տարամետ տեսանկյուններից. սոցիոլոգիայից՝ սոցիալական փոխանակման տեսության և հոգեբանությունից՝ կապվածության տեսության տեսանկյունից: Այս երկու տեսությունների ուսումնասիրությունների ոլորտում նրանց վերաբերյալ գոյություն ունի հսկայական զրականություն և բազմաթիվ հետազոտություններ:

Սոցիալական փոխանակման տեսություն

Սոցիալական փոխանակման տեսությունը (ՄՓՏ) սոցիոլոգիական տեսակետ է, որը բացատրում է սոցիալական փոփոխությունն ու կայունությունը որպես կողմերի միջև համաձայնեցված փոխանակումների գործընթաց: ՄՓՏ-ն ենթադրում է, որ բոլոր մարդկային հարաբերությունները ձևավորվում են՝ օգտագործելով սուբյեկտիվ ծախս-շահ վերլուծությունը և այլընտրանքների համեմատությունը: Այս տեսությունն արմատներ ունի տնտեսագիտության, հոգեբանության և սոցիոլոգիայի ոլորտում: ՄՓՏ-ն շեշտում է ռացիոնալ ընտրության տեսության և ստրուկտուրալիզմի մեջ առկա հիմնական ենթադրություններից շատերը (Liang, et al., 2001):

Սոցիալական փոխանակման տեսությունը, որն արմատներ ունի տնտեսական տեսության մեջ և փոփոխության է ենթարկվել Thibaut and Kelley-ի (1959) կողմից, խմբերի սոցիալական հոգեբանությունն ուսումնասիրելու նպատակով, կենտրոնացնում է կապերի հարաբերական ծախսերի և շահույթների մասին պատկերացումների և հարաբերության պահանջը բավարարելու վերաբերյալ դրանց հավանական

արդյունքի վրա: Համեմատությունը սոցիալական փոխանակման կարևոր բաղադրիչ է, և ապահովում է այն չափանիշը, որով դատողություն է արվում բոլոր հարաբերությունների մասին: Համեմատական չափանիշները սուբյեկտիվ են և տարբերվում են անհատների և խմբերի մոտ (Ward & Berno, 2011):

Սոցիալական փոխանակման տեսության հիմնական հասկացությունները

Սոցիալական փոխանակման տեսության (ՄՓՏ) համաձայն, մարդիկ բացահայտ կերպով կամ անուղղակիորեն հաշվարկում են միջանձնային հարաբերություններում կատարած իրենց ներդրումները և ստացած շահույթները (Blau, 1964; Homans, 1958), և համապատասխանաբար ընկալում են այս հարաբերությունները փոխանակման երեք օրինաչափությունների առումով. (1) փոխհատուցվող, որի դեպքում հավասար քանակությամբ ռեսուրսներ են ներդրվում և ստացվում, 2) վեր-հատուցվող, որի դեպքում ստացված ռեսուրսները գերազանցում են ներդրումները, և 3) անդր-հատուցվող, որի դեպքում ներդրված ռեսուրսները գերազանցում են ստացվածներին (Walster, Walster, & Berscheid, 1978): Պաշտպանական փոխանակումների բնագավառում վերջերս կատարված ուսումնասիրությունները հանգեցրել են պաշտպանական հարաբերություններում այս փոխանակման մոդելների դերի վերաբերյալ երեք գլխավոր տեսակետների (Nahum-Shani & Bamberger, 2011):

ՄՓՏ-ն ունի երեք գլխավոր հասկացություններ, որոնք փոխանակման հավասարման բաղադրիչներն են: Ծախսերը հարաբերություններ պարունակող կյանքի տարրեր են, որոնք անձի նկատմամբ ունեն բացասական արժեք, օրինակ՝ հարաբերության մեջ ներդրված ջանքերը և զուգընկերոջ բացասական հատկանիշները (West & Turner, 2007): (Ծախսերը կարող են ներառել ժամանակ, դրամ, ջանքեր և այլն): Պարգևատրումները հարաբերության այն տարրերն են, որոնք ունեն դրական արժեք (պարգևատրումները կարող են ներառել հավանության զգացողությունը, պաշտպանությունը, ընկերակցությունը և այլն): ՄՓՏ-ն պնդում է, որ մարդիկ հաշվարկում են կոնկրետ հարաբերության ընդհանուր Արժեքը՝ (Շահույթը) նրա պարգևատրումներից հանելով ծախսերը (Zafirovski, 2005):

Եթե արժեքը դրական թիվ է ստացվում, ուրեմն դա դժական հարաբերություն է: Ընդհակառակը, բացասական թիվը ցույց է տալիս բացասական հարաբերություն: Հարաբերության արժեքը ազդում է նրա արդյունքի վրա, կամ այն հանգամանքի, թե արդյո՞ք մարդիկ կշարունակեն պահպանել հարաբերությունը, թե կխզեն այն: Դրական հարաբերությունները հակված են շարունակվելու, մինչդեռ բացասականները հավանաբար խզվում են (Monge, & Contractor, 2003):

Որոշակի տարբերություն կա տնտեսական և սոցիալական փոխանակումների միջև. սոցիալական փոխանակումները պարունակում են մյուս անձի հանդեպ կապվածություն, դրանք ներառում են վստահություն և ոչ թե օրինական պարտավորություններ: Սոցիալական փոխանակումներն ավելի ճկուն են և դրանցում բացահայտ սակարկումը հազվադեպ է: Միջանձնային հարաբերությունների ուղղորդող ուժը երկու կողմերի անձնական շահերի բարձրացումն է (Stanford, 2008):

Սոցիալական փոխանակման տեսությունը ենթադրում է, որ միջանձնային հարաբերություններում գլխավոր ուժը երկու կողմերի անձնական շահերի բավարարումն է: Անձնական շահը անպայմանորեն վատ չի համարվում և կարող է օգտագործվել հարաբերություններն ընդլայնելու համար: Ենթադրվում է, որ միջանձնային փոխանակումները նման են տնտեսական փոխանակումներին, որտեղ մարդիկ բավարարված են, երբ իրենց ծախսերի դիմաց ստանում են արդար շահույթ (Zafirovski, 2005):

Շահույթը ներառում է նյութական կամ ֆինանսական ձեռքբերումներ, սոցիալական կարգավիճակ և զգայական հանգստություն: Ծախսերն ընդհանրապես ներառում են ժամանակի, դրամի և կորցրած հնարավորությունների զոհաբերություն: Արդյունքը սահմանվում է որպես շահույթի և ծախսերի տարբերություն:

Քանի որ մարդիկ հարաբերություններից ունեն տարբեր ակնկալիքներ, հարաբերությունից անհատի բավարարվածության աստիճանը կախված է ավելի շատ գործոններից, քան պարզապես արդյունքից: Ցանկացած նույն արդյունքն ունեցող երկու մարդկանց համար բավարարվածության աստիճանը կարող է տարբեր լինել կախված նրանց ակնկալիքներից: Մեկը կարող է շատ մեծ արդյունքներ չակնկալել, և հետևաբար ավելի հեշտությամբ զոհանալ հարաբերություններից, քան այն անձը, ով ավելի է ակնկալում: Բավարարվածության այս գաղափարը սահմանվում է որպես արդյունքի և համեմատության

աստիճանի միջև տարբերություն: Այսինքն կան մարդիկ, որոնք շարունակում են մնալ անհաջող հարաբերություններում, ինչպես նաև այնպիսիք, որոնք դադարեցնում են երջանիկ հարաբերությունները: Այն ինչ որոշում է, թե արդյո՞ք անձը կպահպանի հարաբերությունը, թե կդադարեցնի այն փոխարինող հարաբերության առկայությունն է: Եթե անհատի համար գոյություն ունեն շատ այլընտրանքներ, ապա նա ավելի քիչ կախվածություն ունի հարաբերությունից: Կախվածության այս հասկացությունը սահմանվում է որպես արդյունքի և «այլընտրանքների համեմատության աստիճանի» միջև տարբերություն:

Պոտենցիալ այլընտրանքների շարքը կարող է վերահսկվել արտաքին և ներքին գործոնների միջոցով: Եվ՝ արտաքին և՛ ներքին գործոններն ազդում են այլընտրանքային հարաբերություն ստեղծելու համար անձին հասանելի մարդկանց շարքի վրա և հետևաբար՝ ներկա հարաբերությունից անձի կախվածության աստիճանի վրա (Zafirovski, 2005):

Հարաբերությունը խզելու մասին որոշում կայացնելիս անձը հաշվի է առնում այլընտրանքները: Կան նաև այլ հանգամանքներ, ինչպես օրինակ՝ հարաբերությունը խզելու ճանապարհին եղած խոչընդոտները, այդ թվում՝ ընդհարումից խուսափելը, համատեղ ֆինանսական հաշիվ ունենալը և այլն: Այս հանգամանքների շարքում է նաև հարաբերության մեջ անհատի կատարած ներդրման վերաբերյալ նկատառումները: Օրինակ՝ այն զույգի համար, որը երկար տարիներ ապրել է միասին, շատ ժամանակ է ներդրել հարաբերության մեջ, և սա պետք է հաշվարկվի այլընտրանքային հարաբերություններից ստացվող շահույթի դիմաց (Monge, & Contractor, N. 2003):

Սոցիալական հարաբերությունները սոցիալական փոխանակման տեսության համատեքստում

ՄՓՏ-ն ներառում է հարաբերության մասին պատկերացում և որոշակի գաղափար այն համատեղ պարտավորության մասին, որը ենթադրում է երկու կողմի միմյանց հանդեպ պարտավորությունների գիտակցում (Lavelle, Rupp, & Brockner, 2007):

ՄՓՏ-ում գնահատումը կապված է երկու տեսակի համեմատություններից՝ Համեմատության աստիճան և Այլընտրանքների համեմատության աստիճան: Համեմատության աստիճանը (ՀԱ) այն չափանիշն է, որը ցույց է տալիս, թե մարդիկ ինչ պատկերացում ունեն կոնկրետ

հարաբերությունից ստացվելիք պարզևատրումների և ծախսերի մասին (Thibaut, & Kelley, 1959): Այլընտրանքների համեմատության աստիճանը (ԱՅԱ) վերաբերում է հարաբերություններում պարզևատրումների նվազագույն մակարդակին, որն անձը ցանկանում է ստանալ, հաշվի առնելով այլընտրանքային հարաբերություններից կամ մեծակմնալուց ստացվող պարզևատրումները (Berger, Roloff, & Roskos-Ewoldsen, 2010):

Ըստ Thibaut & Kelley-ի (1959)՝ մարդիկ ներգրավվում են Վարքագծային Հաջորդականության կամ իրենց նպատակներին հասնելու համար նախագծված գործողությունների շարքում: Երբ մարդը ներգրավվում է այս վարքագծային հաջորդականությունների մեջ, նա որոշակի չափով կախվածություն ունի իր ընկերոջից: ճակատագրի վերահսկումը ընկերոջ ստացած արդյունքների վրա ներգործելու կարողությունը է: Վարքագծի վերահսկումը սեփական վարքագծի փոփոխման միջոցով ուրիշի վարքագիծը փոխելու ուժն է: Հետևաբար, մարդու բնույթի մասին ՍՓՏ-ի ենթադրությունները ներառում են հետևյալները. (West & Turner, 2007)

1. Այն մարդիկ, ովքեր ներգրավվում են փոխգործակցության մեջ ռացիոնալ կերպով ձգտում են լավագույնի հասցնել շահույթները:

2. Մարդկանց գոհունակության մեծ մասը կախված է ուրիշներից: Վերլուծության միավորներ են զույգերը կամ փոքր խմբերը:

3. Մարդկանց հասանելի է փոխգործակցության սոցիալական, տնտեսական և հոգեբանական ասպեկտների վերաբերյալ տեղեկատվություն, որը նրանց թույլ է տալիս նկատի առնել այլընտրանքային՝ իրենց ներկա պայմանների համեմատ ավելի շահավետ իրավիճակ:

4. Մարդիկ ռացիոնալ են և հաշվարկում են պարզևատրվող իրավիճակներում մրցակցելու հնարավոր ամենալավ միջոցները: Նույնը վերաբերում է նաև պատժից խուսափելու իրավիճակներին: ՍՓՏ-ն կազմվածքային-մեխանիկական է, այնքանով, որքանով անհատը չի վերահսկում իր վարքագծի մասին ակնկալիքները: Անհատական ռեակցիաները նեղ իմաստով սահմանվում են որպես ընդունելի:

5. Ազատ մրցակցային համակարգում մարդիկ նպատակակենտրոն են: ՍՓ-ն ֆորմալ տեսություն է:

6. Փոխանակումը գործում է մշակութային նորմերի սահմանում:

7. Սոցիալական վարկն ավելի գերադասելի է, քան ոցիալական պարտքը: ՍՓ-ն նմոթետիկ է:

8. Ինչքան անձը զրկված է զգում որևէ գործողության հետ կապված, այնքան շատ է նա արժևորում այն: Կրկին, ՍՓՏ-ն նոմոթետիկ է՝ հիմնված ընդհանուր օրենքների վրա:

Բանտարկյալի դիլեման լայն օգտագործվող օրինակ է խաղերի տեսության մեջ, որը ձգտում է ցույց տալ, թե ինչու և ինչպես երկու անհատներ չեն կարող համագործակցել միմյանց հետ, նույնիսկ եթե նրանք առավելագույնս շահագրգռված են այդպես անել: Այն ցույց է տալիս, որ չնայած համագործակցությունը տալու էր լավագույն արդյունքը, համենայն դեպս մարդիկ կարող են եսասիրաբար գործել (Thibaut, & Kelley, 1959):

Հաջորդ փուլում, մարդու բնույթի մասին ՍՓՏ-ի ենթադրությունները ներառում են հետևյալները (West & Turner, 2007):

1. Հարաբերություններում առկա է փոխադարձ կախվածություն:

2. Հարաբերություններ պարունակող կյանքը գործընթաց է:

3. Մարդիկ ուժային դիֆերենցիալներին դիմագրավելու և ուժի կիրառման հետ կապված ծախսերը հոգալու համար մշակում են փոխանակման մոդելներ: Այս մոդելները մեկնաբանում են այն վարքագծային կանոնները կամ նորմերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են մարդիկ պարզևատրումները առավելագույնի, իսկ ծախսերը նվազագույնի հասցնելու համար՝ փոխանակում ռեսուրսները: Մարդկանց կողմից մշակված մոդելները ցույց տալու համար Thibaut, & Kelley-ն (1959) պատկերել են երեք տարբեր մատրիցաներ:

Այս երեք մատրիցաներում առկա են երեք տեսակներ: Ուղղակի փոխանակման մեջ, փոխադարձ գործողությունը սահմանափակվում է երկու գործող անձանցով: Մեկ սոցիալական գործող անձը արժեք է ապահովում մյուսի համար, իսկ մյուսը փոխհատուցում է: Ընդհանրացված փոխանակումը ներառում է անուղղակի փոխադարձ գործողություն: Անձը ինչ-որ բան է տրամադրում մեկ այլ անձի, իսկ ստացողը փոխհատուցում է, բայց ոչ առաջին անձին: Արդյունավետ փոխանակումը ցույց է տալիս, որ երկու գործող անձինք էլ պետք է նպաստեն իրենցից երկուսի շահույթ ստանալուն: Երկու անձինք առաջացնում են շահույթը և ծախսերը միաժամանակ (Berger, Roloff, & Roskos-Ewoldsen, 2010):

Սոցիալական փոխանակման եղանակները

Leybman et al.-ը (2011) սոցիալական փոխանակման եղանակների (ՍՓՏեր) մեջ գտել են անհատական տարբերությունների երկու ասպեկտներ. Արդար դաշինք կազմելը (ԱՂԿ. շահույթ և շահույթի հավասարություն հետապնդելու հակումը և սոցիալական փոխանակման հարաբերություններ հաստատելու և պահպանելու համար ներդրում կատարելու ցանկությունը) և Աչալուրջ դաշինք վարելը (փոխանակման հարաբերություններում ծախսերը և շահերը վերահսկելու հակումը, փոխանակման կողմերի հետ բանակցություններում հաստատուն լինելը և փոխանակման հարաբերությունները դադարեցնելու ցանկություն ունենալը): ԱՂԿ-ն և ԱՂՎ-ն տարբերվում են հոգեբանության մեջ Անհատական հատկանիշների և կապվածության տեսակներին վերաբերող Չինգ գործոնի մոդելից (ՉԳՄ), սակայն այս փոփոխականների հետ ցույց են տվել կանխատեսելի կապ: Այսինքն, էքստրավերտ և հաճելի մարդկանց մոտ բարձր է ԱՂԿ-ն, իսկ անդուր և խուսափողականորեն միմյանց հետ կապված մարդկանց մոտ ավելի բարձր է ԱՂՎ-ն: ԱՂԿ-ն և ԱՂՎ-ն կանխատեսում են փոքր խմբերում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործունեությունը:

Սոցիոլոգիայի և հոգեբանության մեջ առկա հասկացությունները միմյանց մոտեցնելու համար Leybman et al.-ը (2011) մշակել են Սոցիալական փոխանակման եղանակների հարցաթերթը (ՍՓԵՅ)՝ որպես սոցիալական փոխանակման տիրույթի սահմաններում անհատական տարբերությունների չափանիշ, որի մեջ Սոցիալական փոխանակման եղանակները (ՍՓԵ) սահմանվել են էվոլյուցիոն հոգեբանական տերմիններով և նախորդ սանդղակների համեմատ տիրույթի ավելի լայն միջակայք են ծածկել: Անհատական չափանիշներից շատերը առաջարկում են և՛ բարձրակարգ և՛ ցածրակարգ գործոններ, որպեսզի սանդղակն օգտագործողները կարողանան որոշում կայացնել խնայողությանը կամ համակողմանիությանը հետամուտ լինելու միջև: Leybman et al.-ը (2011) ենթադրում էին, որ ԱՂԿ-ն և ԱՂՎ-ն առաջանում են չորս ցածրակարգ գործոններից. շահագործող լինելը (շահույթները բարձրացնել՝ փորձելով նվազագույնի հասցնել ծախսերը), արդարություն (շահույթները բարձրացնել՝ ենթադրելով ծախսերը), օգնելը (ենթադրել ծախսերը՝ առանց անպայմանորեն ակնկալելու կամ բարձրացնելու շահույթները), և ինդիվիդուալիզմ (դաշինքների հանդեպ անտարբերություն, փոքր ներդրումներ և քիչ շահույթ):

2. Կապվածության տեսությունը

Կապվածության տեսությունը հոգեբանության մեջ սոցիալական զարգացման վերաբերյալ լայն տեսություն է, որը բնութագրում է սերտ միջանձնային հարաբերությունների մոդելների ակունքները: Վաղ զարգացման շրջանում միջավայրի (հատկապես ծնողական) և զենե-տիկ գործոնների փոխգործակցությունը հանգեցնում է կապվածու-թյան վարքագծի անհատական տարբերությունների առաջացմանը: Կապվածության վարքագծերը միջանձնային գործողություններ են, ո-րոնք նախատեսված են բարձրացնելու անհատի ապահովության զգացումը, հատկապես սթրեսների կամ կարիքի ժամանակ: Այս մի-ջանձնային մոդելները բավականին կայուն են, և չափափաս տարի-քում, հայտնի են որպես կապվածության մոդելներ (Cassidy, & Shaver, 2010; Mikulincer, & Shaver, 2007):

Կապվածության տեսությունը պնդում է, որ բոլոր անհատները ծնվում են կարիքի կամ տխրության պահին ուրիշների հետ մերձեցում փնտրելու բնածին ցանկությամբ, որպեսզի ընդլայնեն իրենց գո-յատևման հեռանկարները: Անհատների մոտ դրսևորվում է ապահո-վության զգացում, այնքանով, որքանով որ մերձեցման այդ փորձերը հաջողվում են: Այս ապահովության (կամ դրա պակասի) զգացումը հե-տագայում դառնում է նրանց սեփական անհատական կապվածության տեսակի հիմքը, որն այնուհետև անհատի կյանքի ընթացքում հարա-բերականորեն կայուն է մնում (Harms, 2011): Կապվածության տեսու-թյունը բնութագրում է մարդկանց միջև երկարատև հարաբերություննե-րի դինամիկան: Սկզբում նորածինները կապվում են այն մեծահասակ-ների հետ, որոնք իրենց հետ սոցիալական փոխգործակցության ժա-մանակ զգայուն են և ուշադիր, և որոնք հոգատարության առումով մնում են նույնքան հետևողական մինչև զրեթե երեխայի պառտանե-կության ավարտը: Ծնողական արձագանքները հանգեցնում են կապ-վածության տեսակների զարգացմանը: Սրանք իրենց հերթին հանգեց-նում են ներքին գործողության մոդելների ձևավորմանը, որոնք հետա-գա հարաբերություններում ուղղորդելու են անձի ընկալումները, զգացումները, մտքերը ու ակնկալիքները (Bretherton, & Muniholland, 2010): Բաժանման համար անհամապատասխան կամ կապ-վածության օբյեկտի կորստի համար վշտանալալ համարվում են կապվածություն ունեցող անհատի համար նորմալ և հարմարվողա-կան արձագանքներ: Այս վարքագծերը կարող են ձևավորված լինել

այն պատճառով, որ նրանք մեծացնում են երեխայի գոյատևման և նրա հետագա կյանքում ձևավորվելիք հարաբերությունների պաշտպանված լինելու հավանականությունը (Prior & Glaser, 2006): Կապվածության եղանակի ձևավորումը կապված է միջանձնային կանոնների տարբեր ասպեկտների հետ (այսինքն, այն գործընթացների, որոնք կարգավորում են ուրիշների հետ մարդու փոխգործակցությունը), և ազդում է սոցիալական փոխգործակցության ընթացքում մարդկանց զգացմունքների, մտքերի, վերաբերմունքի ու վարքագծերի վրա (Troisi, et al., 2010):

Այդ ժամանակից ի վեր՝ հոգեբանական տեսակետներում կապվածության տեսությունը դարձել է «վաղ սոցիալական զարգացումն ընկալելուն ուղղված գերիշխող մոտեցում, և փորձառական հետազոտության մեծ ալիք է բարձրացրել երեխաների սերտ հարաբերություն ձևավորելու» (Schaffer, 2011) և մեծահասակների հաստատում, կայուն, փոխադարձ և խորը հարաբերությունների վերաբերյալ (Alfasi, Gramzow, & Carnelley, 2010): Կապվածության տեսությունը ձևավորել է նոր բուժման մեթոդների հիմքը և լուսաբանել եղածները: Նրա հասկացություններն օգտագործվել են սոցիալական, և երեխաների կապվածության վրա հիմնված վաղ հարաբերությունների պաշտպանությանն ուղղված, երեխայի խնամքին վերաբերող քաղաքականությունների ձևակերպման մեջ (Berlin, Zeanah, & Lieberman, 2010):

Կապվածության սահմանումը

Կապվածությունը, բառի բուն իմաստով, նշանակում է անհատի և կապվածության օբյեկտ հանդիսացող անձի (սովորաբար խնամողի) միջև զգացմունքային կապի առկայություն: Երկու չափահասների համար նման կապերը կարող են լինել երկկողմանի և փոխադարձ, սակայն երեխայի և խնամողի միջև այսպիսի կապերը հիմնված են երեխայի ապահովության, անվտանգության և պաշտպանության կարիքի վրա, որոնք առաջնային են նրա նորածին և մանուկ հասակում: Տեսությունն առաջարկում է, որ երեխաները կապվում են խնամողների հետ բնագոյաբար (Bretherton, & Munholland, 2010), գոյատևման և ի վերջո գենետիկական ռեպլիկացիայի նպատակով (Prior & Glaser, 2006): Կենսաբանական նպատակը գոյատևելն է, իսկ հոգեբանականը՝ անվտանգությունը (Schaffer, 2011 թ.): Կապվածության տեսությունը մարդկային հարաբերությունների սպառիչ նկարագրություն է: Ոչ

էլ այն հոմանիշ է սիրուն ու ջերմությանը, թեև դրանք կարող են ցույց տալ կապերի առկայություն: Երեխա-չափահաս հարաբերություններում, երեխայի կապը կոչվում է «կապվածություն» իսկ խնամողի համար փոխադարձ համարժեքը՝ «խնամք ապահովող կապ» (Prior & Glaser, 2006):

Սարդ արարածների մոտ կապվածությունը նախ ձևավորվում է նորածին հասակում: Նորածինները կապվածություն են դրսևորում ցանկացած հետևողական խնամողի հանդեպ, ով իրենց հետ սոցիալական փոխգործակցության ժամանակ զգայուն են և ուշադիր: Սոցիալական ներգրավվածության որակն ավելի ազդեցիկ է, քան ծախսված ժամանակը: Կենսաբանական մայրը հերթական հիմնական կապվածության օբյեկտն է, սակայն այս դերը կարող է ստանձնել ցանկացած անձ, ով հետևողականորեն և մայրաբար նրան խնամում է որոշ ժամանակահատվածի ընթացքում: Կապվածության տեսության մեջ սա նշանակում է վարքագծերի շարք, որը ներառում է նորածնի հետ աշխույժ սոցիալական փոխգործակցության մեջ մտնելը և ազդանշաններին ու մոտեցումներին պատրաստակամորեն արձագանքելը (Bowlby, 2005): Տեսության մեջ չի ակնարկվում այն մասին, որ հայրերը չեն կարող հավասարապես դառնալ հիմնական կապվածության օբյեկտ, եթե նրանք ապահովում են երեխայի խնամքի հիմնական մասին համապատասխան սոցիալական փոխգործակցությունը (Shemmings, & Shemmings, 2011 թ.):

Կապվածության վարքագծային համակարգի որոշված նպատակն է մատչելի ու հասանելի կապվածության օբյեկտի հետ կապ պահպանելը (Kobak գործիչ, & Madsen, 2010): «Տագնապը» այն տերմինն է, որն օգտագործվում է վտանգի հանդեպ վախի պատճառով առաջացած կապվածության վարքագծային համակարգի ակտիվացման համար: «Անհանգստությունը» կապվածության օբյեկտից բաժանվելու կանխատեսումը կամ վախն է: Եթե օբյեկտը անհասանելի է կամ չի արձագանքում նրան, առաջանում է բաժանման մտահոգությունը (Prior & Glaser, 2006 թ.): Ավելի մեծ երեխաների և մեծահասակների մոտ անվտանգության հանդեպ սպառնալիքները առաջանում են երկար բացակայության, կապի ծախողման, զգացմունքների պակասի կամ մերժման ու լքման նշանների առկայության դեպքում (Kobak, & Madsen, 2010):

Կապվածության ձևավորումը

1007

Կապվածության վարքագծային համակարգը նպաստում է կապվածության օբյեկտին առավել մոտենալուն և այդ վիճակը պահպանելուն: Խնամողի նկատմամբ նորածնի վարքագիծը աստիճանաբար դառնում է կազմակերպված՝ նպատակին ուղղված հիմքի վրա՝ հասնելու այն պայմաններին, որոնք կնպաստեն նրա ապահով զգալուն (Prior & Glaser, 2006 թ.): Առաջին տարվա վերջում նորածինն ի վիճակի է ցույց տալ մտերմության պահպանելու համար նախագծված մի շարք կապվածության վարքագծեր: Դրանք դրսևորվում են խնամողի հեռանալու հանդեպ բողոքի, նրա վերադարձի նկատմամբ ողջույնի, վախեցած ժամանակ նրան փաթաթվելու և, հնարավորության դեպքում, նրան հետևելու տեսքով (Furrow, Johnson, Bradley, 2011): Տեղաշարժվելու զարգացման հետ միասին՝ նորածինը սկսում է խնամողին կամ խնամողներին օգտագործել որպես իր ուսումնասիրությունների անվտանգ հիմք (Prior & Glaser, 2006 թ.): Նորածնի ուսումնասիրություններն ավելի ընդարձակ են, երբ խնամողը ներկա է, քանի որ նրա կապվածության համակարգը հանգիստ է, և նա ազատ է ուսումնասիրություն կատարելու: Եթե խնամողը անհասանելի է կամ չի արձագանքում, կապվածության վարքագիծն ավելի ընդգծված է արտահայտվում: Անհանգստությունը, վախը, հիվանդությունը և հոգնածությունը հանգեցնելու են երեխայի մոտ կապվածության վարքագծի աճին (Furrow, Johnson, & Bradley, 2011): Երկրորդ տարվանից հետո, երբ երեխան սկսում է խնամողին տեսնել որպես անկախ մարդու, ձևավորվում է ավելի բարդ և նպատակով ճշգրտված համագործակցություն (Prior, & Glaser, 2006 թ.): Երեխաները սկսում են նկատել ուրիշների նպատակներն ու զգացմունքները և, համապատասխանաբար, ծրագրում են իրենց գործողությունները: Օրինակ՝ այն դեպքում, երբ նորածինը լաց է լինում ցավի պատճառով, երկու տարեկանները լաց են լինում խնամողի ուշադրությունն իրենց վրա հրավիրելու համար, իսկ եթե դա չի աշխատում, նրանք ավելի բարձր են լաց լինում, բղավում են կամ հետևում նրան (Schaffer, 2011 թ.):

Կապվածության փոփոխությունները

Ըստ կապվածության տեսության՝ սկզբնական խնամողի հետ վաղ գործողությունները երեխաների կողմից իմտերմալիզացվում են, որպեսզի ձևավորեն ներքին աշխատանքային մոդելներ, այսինքն՝ ճա-

նաչողական կառույցներ, որոնք հանդես են գալիս որպես ընտանիքից դուրս՝ հետագա հարաբերությունների նախատիպեր: Չափահասների աշխատանքային մոդելները ազդում են կարևոր այլ մարդկանց հետ չափահասների փոխգործակցության վրա: Մեծահասակների ռոմանտիկ սերը գաղափարականացվում է որպես տարբեր մեծահասակների կողմից տարբեր կերպ զգացված կապվածության գործընթաց, քանի որ նրանց կապվածության նախապատմությունները, որոնք կյանքի վաղ փորձերի ընթացքում ջախջախվել են, տարբերվում են միմյանցից: Տարիքը, ճանաչողական զարգացումը և շարունակվող սոցիալական փորձը բարձրացնում են ներքին աշխատանքային մոդելի զարգացման ու բարդության մակարդակը: Կապվածությանն առնչվող վարքագծերը կորցնում են նորածնին կամ հազիվ քայլող մանկանը բնորոշ մի շարք հատկանիշներ և բարձր տարիքում ստանձնում են տարիքի հետ կապված որոշակի կապվածության եղանակներ ու վարքագծեր ձևավորելու միտումներ (Surcinelli, et al., 2010):

Այս սոցիալական հմտությունները ընդգրկվում են ներքին աշխատանքային մոդելում, որպեսզի մանկության ընթացքում կիրառվեն այլ երեխաների նկատմամբ, իսկ հետագայում՝ չափահաս հասակակիցների (Kerns, 2010): Միջին մանկական հասակում (7-11 տարեկան) կարող է տեղի ունենալ փոփոխություն դեպի անվտանգ հիմքով կապի փոխադարձ համատեղ կարգավորում, որի ընթացքում խնամողն ու երեխան քննարկում են կապի և վերահսկողության պահպանման մեթոդներ, մինչ երեխան շարժվում է դեպի անկախության ավելի բարձր աստիճանի: Դեպի պատանեկություն և հասուն տարիք անցումը համապատասխանաբար ավելի են ընդգծում անկախությունը: Ինքնավարությունը և կապակցվածությունը կամ փոխկապակցվածությունը սերտ հարաբերություններից շատերում կարևոր հիմնահարցեր են (Prager & Roberts, 2004): Նրանց միջեւ հավասարակշռության հասնելը հաճախ դժվար է, սակայն անհրաժեշտ՝ գործընկերների փոխադարձ գոհունակության համար, որը կարող է համարվել հասուն տարիքում վաղ կապվածության ձևափոխված առանձնահատկությունների այլ ասպեկտ (Lavy, Mikulincer, & Shaver, 2010):

Կապվածության եղանակների տեսակների կարևորությունը

Վաղ կապվածության հետևանքները կարող են գտնվել ներքին աշխատանքային մոդելի մեխանիզմում: Ներքին մոդելները պարզապես

«պատկերներ» չեն, այլ վերաբերում են առաջացած զգացմունքներին: Նրանք մարդուն թույլ են տալիս կանխատեսել և մեկնաբանել մեկ այլ անձի վարքագիծը և նախատեսել պատասխան քայլ: Ներքին աշխատանքային մոդելները, որոնց վրա հիմնված է կապվածության վարքագիծը, ցույց են տալիս շարունակականության և կայունության որոշակի աստիճան: Երեխաները հավանաբար կդասակարգվեն իրենց հիմնական խնամողներին բնորոշող կատեգորիայի ներքո, որը ցույց է տալիս, որ խնամողների ներքին աշխատանքային մոդելները ազդում են երեխայի հետ նրանց կապի միջոցի վրա: Նկատվել է, որ այս ազդեցությունը շարունակել է ամբողջ երեք սերունդների համար: Bowlby-ին պնդել է, որ ամենավաղ ձևավորված մոդելները մեծ հավանականությամբ գոյատևելու են, որովհետև նրանք եղել են ենթագիտակցության մեջ: Համեմայն դեպս, հաշվի առնելով հարաբերությունների հետագա հնարավորությունները, նման մոդելները զերծ չեն փոփոխման ենթարկվելուց: Երեխաների մի փոքրամասնության մոտ, տարբեր խնամողների դեպքում, տարբեր կապվածության դասակարգումներ են նկատվել (Schaffer, 2011):

Որոշակի ապացույցներ կան, որ հարմարվողականության նշանակությամբ կապվածության տեսակներում զենդեռային տարբերությունները սկսում են ի հայտ գալ միջին մանկական հասակում: Անապահով կապվածությունը և վաղ հոգեբանասոցիալական սթրեսը արտահայտում են միջավայրային ռիսկի (օրինակ՝ աղքատության, հոգեկան հիվանդություն, անկայունության, փոքրամասնության կարգավիճակ, բռնություն) առկայությունը: Սա կարող է հակված լինել նպաստելու վաղ վերարտադրության համար անհրաժեշտ ռազմավարությունների զարգացմանը: Այնուամենայնիվ, տարբեր եղանակներ տարբեր հարմարվողական արժեքներ ունեն տղամարդկանց եւ կանանց համար: Անապահով տղամարդիկ հակված են որդեգրելու խուսափողական ռազմավարություններ, մինչդեռ անապահով կանայք հակված են տազնապալի/հակասական ռազմավարություններ որդեգրելուն, եթե նրանք չեն գտնվում շատ բարձր ռիսկային միջավայրում: Աղբյուրակը ներկայացվում է որպես միջին մանկության հասակում անապահով կապվածության վերակազմավորման հիմքում ընկած էնդոկրին մեխանիզմ (Del Giudice, 2009):

1. Ackerman, J. M., Kenrick, D. T., & Schaller, B. (2007). Is friendship akin to kinship? *Evolution and Human Behavior*, 28, 274–365.
2. Ainsworth, M. D. S. (1991). Attachment and other affectional bonds across the life cycle. In C. M., Parkes, J., Stevenson-Hinde, & P., Marris (Eds.), *Attachment across the life cycle* (pp. 33–51). New York, NY, USA: Routledge.
3. Alfasi, Y., Gramzow, R.H., & Carnelley, K.B. (2010). Adult attachment patterns and stability in esteem for romantic partners. *Personality and Individual Differences*, 48, 607–611.
4. Andersson, L.G., Butler, M.H., & Seedall, R.B. (2006). Couples' experience of enactments and softening in marital therapy. *American Journal of Family Therapy*, 34(4), 301–315.
5. Berger, C. R., Roloff, M. E., & Roskos-Ewoldsen, D. R. (2010). *The handbook of communication science* (2nd ed.). Thousand Oaks, CA, USA: Sage Publications, Inc.
6. Berlin, L., Zeanah, C.H., & Lieberman, A.F. (2010). Prevention and Intervention Programs for Supporting Early Attachment Security. In J., Cassidy, & P.R., Shaver, *Handbook of Attachment: Theory, Research and Clinical Applications* (2nd Ed) (pp. 7452–761). New York, NY, USA: Guilford Press.
7. Berscheid, E., & Peplau, L.A. (1983). The emerging science of relationships. In H.H. Kelley, et al. (Eds.), *Close relationships*. (pp. 1–19). New York, NY, USA: W.H. Freeman and Company.
8. Blau, P. M. (1964). *Exchange and power in social life*. New York, NY, USA: John Wiley & Sons Publishing.
9. Bowlby, J. (1988). *A secure base: Clinical applications of attachment theory*. London, UK: Routledge.
10. Bowlby, J. (1999). Attachment and loss: Attachment (Vol. 1, 2nd ed.). New York, NY, USA: Basic Books (Original ed. 1969).
11. Bowlby, J. (2005). *The making and breaking of affectional bonds* (2nd Ed). London, UK: Routledge.
12. Bretherton, I., Munholland, K.A. (2010). Internal Working Models in Attachment Relationships: A Construct Revisited. In J., Cassidy, & P.R., Shaver, *Handbook of Attachment: Theory, Research and Clinical Applications* (2nd Ed) (pp. 102–130). New York, NY, USA: Guilford Press.
13. Cassidy, J., & Shaver, P.R. (Eds) (2010). *Handbook of attachment: theory, research, and clinical applications* (2nd ed.). New York, NY, USA: The Guilford Press.

14. Del Giudice, M. (2009). Sex, attachment, and the development of reproductive strategies. *Behavioral and Brain Sciences*, 32(1), 1–67.
15. DeVries, R., Goncu, A. (1987). Interpersonal relations in four-Year Dyads from constructivist and Montessori programs. *Journal of Applied and Developmental Psychology*, 8, 481–501.
16. Dewitte, M., Houwer, J.D., Goubert, L., Buysse, A. (2010). A multi-modal approach to the study of attachment-related distress. *Biological Psychology*, 85, 149–162.
17. Diewald, M., Sattler, S., Wendt, V., & Lang, F. R. (2009). Verwandtschaft und verwandtschaftliche Beziehungen [Kinship and kin relationships]. In K. Lenz & F. Nestmann (Eds.), *Handbuch Persönliche Beziehungen* (pp. 423–444). Weinheim, Germany: Juventa.
18. Durkheim, E. (1997). *The Division of Labor in Society*. Translated by L. A. Coser. New York, NY, USA: Free Press.
19. Fadul, J. & Estoque, R. A. (2010). *Textbook for an Introductory Course in Sociology*. Canada: Lulu Enterprises, Inc.
20. Feeney, J.A. (1995). Adult attachment and emotional control. *Personal Relationships*, 2, 143–159.
21. Feeney, J.A. (1999). Adult attachment, emotional control and marital satisfaction. *Personal Relationships*, 6, 169–185.
22. Furrow, J.L., Johnson, S.M., & Bradley, B.A. (2011). The emotionally focused therapist training set: The emotionally focused casebook. London, UK: Routledge.
23. Harms, P.D. (2011). Adult attachment styles in the workplace. *Human Resource Management Review*, 21, 285–296.
24. Hayward, M., Berry, K., & Ashton, A. (2011). Applying interpersonal theories to the understanding of and therapy for auditory hallucinations: A review of the literature and directions for further research. *Clinical Psychology review*, 31, 1313–1323.
25. Hazan, C., & Shaver, P. R. (1987). Romantic love conceptualized as an attachment process. *Journal of Personality and Social Psychology*, 52, 511–524.
26. Hazan, C., & Zeifman, D. (1994). Sex and the psychological tether. In K., Bartholomew, & D., Perlman (Eds.), *Advances in personal relationships: Attachment processes in adulthood* (Vol. 5, pp. 151–177). London: Jessica Kingsley.
27. Homans, G. C. (1958). Social behavior as exchange. *American Journal of Sociology*, 63, 597–606.
28. Johnson, S.M. (2004). *The practice of emotionally focused couple therapy: Creating connection*. New York, NY, USA: Brunner-Routledge.
29. Johnson, S.M., & Greenberg, L. (1988). Relating process to outcome in marital therapy. *Journal of Marital and Family Therapy*, 14, 175–183.

30. Johnson, S.M., & Talitman, E. (1996). Predictors of success in emotionally focused marital therapy. *Journal of Marital and Family Therapy*, 23, 135-152.
31. Keelan, J.P.R., Dion, K.K., & Dion, K.L. (1998). Attachment style and relationship satisfaction: Test of a self-disclosure explanation. *Canadian Journal of Behavioral Science*, 30, 24-35.
32. Kenneth, A., & Kenneth, D. A. (2005). *Explorations in Classical Sociological Theory: Seeing the Social World*. USA: Pine Forge Press.
33. Kerns, K.A. (2010). Attachment in Middle Childhood. In J., Cassidy, & P.R., Shaver, *Handbook of Attachment: Theory, Research and Clinical Applications* (2nd Ed) (pp. 366-382). New York, NY, USA: Guilford Press.
34. Kobak, R., & Madsen, S. (2010). Disruption in Attachment Bonds. In J., Cassidy, & P.R., Shaver, *Handbook of Attachment: Theory, Research and Clinical Applications* (2nd Ed) (pp. 23-47). New York, NY, USA: Guilford Press.
35. Lang, F. R., Wagner, J., & Neyer, F. J. (2009). Interpersonal Functioning across the lifespan: Two principles of relationship regulation. *Advances in Life Course Research*, 14, 40-51.
36. Lavelle, R., Rupp, D., & Brockner, J. (2007). Taking a multi-foci approach to the study of justice, social exchange, and citizenship behavior: The target similarity model. *Journal of Management*, 33, 841-866.
37. Lavy, S., Mikulincer, M., & Shaver, P.R. (2010). Autonomy-proximity imbalance: An attachment perspective on intrusiveness in romantic relationships. *Personality and Individual Differences*, 48, 552-556.
38. Leybman, M. J., Zuroff, D. C., Fournier, M. A., Kelly, A. C., & Martin, A. E. (2011). Social exchange styles: Measurement, validation, and application. *European Journal of Personality*, 25, 198-210.
39. Liang, J., Krause, M. N., & Bennet, J. M. (2001). Social exchange and well-being: Is giving better than receiving? *Psychology and Aging*, 16, 511-523.
40. Mercer, J. (2006). *Understanding Attachment: Parenting, child care, and emotional development*. Westport, CT, USA: Praeger Publishers.
41. Mikulincer, M., & Shaver, P.R. (2007). *Attachment in adulthood: Structure, dynamics, and change*. New York, NY, USA: Guilford Press.
42. Monge, P. R., & Contractor, N. (2003). *Theories of communication networks*. London, UK: Oxford University Press.
43. Nahum-Shani, I., & Bamberger, P. A. (2011). Explaining the variable effects of social support on work-based stressor-strain relations: The role of Perceived pattern of support exchange. *Organizational behavior and Human Decision Processes*, 114, 49-63.
44. Nicolo, G., Semerari, A., Lysaker, P. H., Dimaggio, G., Conti, L., D'Angerio, S., et al. (2011). Alexithymia in personality disorders: Correla-

- tions with symptoms and interpersonal functioning. *Psychiatry Research*, 190, 37-42.
45. Pickering, W. S. F., & Walford, G. (2000). *Durkheim's Suicide: a century of research and debate*. London, UK: Routledge.
 46. Prager, K. J., & Roberts, L. J. (2004). Deep intimate connection: Self and intimacy in couple relationships. In D.J., Mashek & A., Aron (Eds.), *Handbook of closeness and intimacy* (pp. 43-60). Mahwah, NJ, USA: Erlbaum.
 47. Prior, V., Glaser, D. (2006). *Understanding Attachment and Attachment Disorders: Theory, Evidence and Practice (Child and Adolescent and Mental Health)*. London, UK: Jessica Kingsley Publishers.
 48. Rosenfeld, M. J. (2005). A critique of Exchange theory in mate selection. *American Journal of Sociology*, 110(5), 1284-1325.
 49. Rutter, M. (1995). Clinical Implications of Attachment Concepts: Retrospect and Prospect. *Journal of Child Psychology & Psychiatry*, 36 (4), 549-471.
 50. Schachner, D.A., Shaver, P.R., & Mikulincer, M. (2003). Adult attachment theory, psychodynamics, and couple relationships: An overview. In S.M., Johnson. & V.E., Whiffen (Eds.), *Attachment processes in couple and family therapy* (pp. 18-42). New York, NY, USA: Guilford.
 51. Schaffer, R. (2011). *Outlines & Highlights for Introducing Child Psychology*. Oxford: Cram101.
 52. Shemmings, D., & Shemmings, Y. (2011). *Understanding Disorganized attachment: Theory and practice for working with children and adults*. Philadelphia, PA, USA: Jessica Kingsley Publishers.
 53. Stanford, L. (2008). Social Exchange theories. In L.A. Baxter & D.O. Braithwaite (Eds.), *Engaging theories in interpersonal communication: Multiple perspectives* (pp.377-389). Thousand Oaks, CA, USA: Sage Publications, Inc.
 54. Surcinelli, P., Rossi, N., Montebanocci, O., & Baldaro, B. (2010). Adult attachment styles and psychological disease: Examining the mediating role of personality traits. *The Journal of Psychology*, 144(6), 523-534.
 55. Sztompka, P. (2010). *Sociology: Analysis of Society*. Warsaw, Poland: Scientific Publishers PWN.
 56. Thibaut, N., & Kelley, H. (1959). *The social psychology of groups*. New York, NY, USA: John Wiley & Sons, Inc.
 57. Troisi, A., Alcini, S., Coviello, M., Nanni, R.C., & Siracusano, A. (2010). Adult attachment style and social anhedonia in healthy volunteers. *Personality and Individual Differences*, 48, 640-643.
 58. Walster, E., Walster, G. W., & Berscheid, E. (1978). *Equity: Theory and research*. Boston, MA, USA: Allyn and Bacon.

59. Ward, C., & Berno, T. (2012). Beyond social exchange theory: Attitudes toward tourists. *Journal of Tourism Research* (Article in Press). doi:10.1016/j.annals.2011.02.005.
60. Weber, M. (1978). *Economy and Society: An Outline of Interpretive Sociology*. San Francisco, CA, USA: University of California Press.
61. Weinfield, N.S., Sroufe, L.A., Egeland, B., & Carlson, E. (2010). Individual differences in infant-caregiver attachment: Conceptual and empirical aspects of security. In J., Cassidy, & P.R., Shaver, *Handbook of Attachment: Theory, Research and Clinical Applications* (2nd Ed) (pp. 78-101). New York, NY, USA: Guilford Press.
62. West, R., & Turner, L. (2007). *Introducing Communication Theory*. New York, NY, USA: McGraw Hill. (pp. 186-187).
63. Zafirovsky, M. (2005). Social exchange theory under scrutiny: A positive critique of its economic-behaviorist formulations. *Electronic Journal of Sociology*, ISSN: 1198 3655.
64. Zilcha-Mano, S., Mikulincer, M., & Shaver P.R. (2011). An attachment perspective on human-pet relationships: Conceptualization and assessment of pet attachment orientations. *Journal of Research in Personality*, 45, 345-357.
65. Zitzman, S.T., & Butler, M.H. (2005). Attachment, addiction, and recovery: Conjoint marital therapy for recovery from a sexual addiction. *Sexual Addiction & Compulsivity: The Journal of Treatment and Prevention*, 12, 311-337.